ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ. ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ – 100. ՃԱՆԱՉՈՒՄԻՑ՝ ՀԱՏՈՒՑՈՒՄ

Գիտաժողովը մեկնարկեց հոկտեմբերի 15-ին, ՀՀ ԳԱԱ նախագահության նիստերի դահլիճում: Գիտաժողովը բացեց և նրա աշխատանքներին հաջողություն մաղթեց ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը*:*

Այնուհետև ընթերցվեց Հայաստանի Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանի *ողջույնի ուղերձը: Գիտաժողովի մասնակիցներին ներկայացվեցին Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ.* Գարեգին Բ-ի *և Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս* Արամ Ա-ի *ողջույնի ուղերձները:*

Ողջույնի խոսքերով հանդես եկան Երևանի պետական համալսարանի ռեկտոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Արամ Սիմոնյանը*, ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ, ԱՄՆ-ի Հայագետների ընկերակցության նախագահ* Գևորգ Բարդակչյանը *և* Վիկտոր Զախարովը *(ՌԴ):*

Լիագումար նիստում զեկուցումներով հանդես եկան ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն, ԳԱԱ ակադեմիկոս Աշոտ Մելքոնյանը՝ *«Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացը և հատուցման հիմնախնդիրը»,* Ռուսլան Շուլգան *(Ռուսաստանի Դաշնություն)*՝ ,Проблемы устранения последствий Геноцида армян. От признания к требованиям компенсациие*, ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի տնօրեն, ԳԱԱ ակադեմիկոս* Ռուբեն Սաֆրաստյանը՝ *«Դիվանագիտությունն ընդդեմ ցեղասպանության. Անտանտի երեք երկրների 1915 թ. մայիսյան հայտարարագիրը (ակունքները և հետևանքները)»,* Էդիկ Մինասյանը՝ *«Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման նոր փուլի առանձնահատկությունները. դատապարտում և հատուցում», Michael Nesemann* (Germany). The Vatican and the Armenian Genocide of 1915/1916.

Այնուհետև գիտաժողովը շարունակվեց տարբեր բաժանմունքներում.

Պատմություն. Պատմագրություն

Հայկական հարց. Աշխարհաքաղաքականություն

Հայոց ցեղասպանության արտացոլումը արվեստում

Տեսություն. Հիշողություն

Հայոց ցեղասպանության արտացոլումը գրականության մեջ

Ցեղասպանության հետևանքների վերացման և հատուցման իրավաքաղաքական ու սոցիալ-տնտեսական հիմնախնդիրը

Մշակութային ցեղասպանություն՝ «Սպիտակ եղեռն»:

Նշենք, որ գիտաժողովի աշխատանքներին մասնակցում էին շուրջ 100 մասնագետներ Հայաստանից, Գերմանիայից, Ռուսաստանի Դաշնությունից, ԱՄՆ-ից, Ավստրիայից, Ավստրալիայից, Ուկրաինայից, Կանադայից, Լեհաստանից, Հունգարիայից և այլ երկրներից: Բաժանմունքներում լսվեցին ավելի քան 100 զեկուցումներ և հաղորդումներ:

Գիտաժողովի մասնակիցները եղան Եղեռնի հուշահամալիրում, Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտում, ներկա եղան իրենց պատվին տրված համերգին:

Հոկտեմբերի 16-ին, նույնպես լիագումար նիստում, ամփոփվեցին գիտաժողովի արդյունքները: Նշվեց, որ այս գիտաժողովը յուրովի ամփոփումն էր Եղեռնի 100-րդ տարելիցի միջոցառումների և իր բովանդակությամբ ու ասելիքով միահամուռ փաստեց, որ Հայոց եղեռնի միջազգային ճանաչման գործընթացին զուգընթաց պետք է վճռական քայլեր (իրավական, դիվանագիտական) ձեռնարկել հատուցման հիմնավոր և իրական ուղիների որոնման ու իրագործման համար:

«Գիտություն», հոկտեմբեր, -10, 2015